




Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2016թ. արժեքն է **33**, և այն Բոլիվիայի և Վիետնամի հետ միասին 176 երկրների շարքում կիսում է **113-ից 115-րդ տեղերը**: Նախորդ 2015թ. Հայաստանի ԿԸՀ համաթվի արժեքն էր **35**, և այդ արժեքով այն 168 երկրների շարքում կիսում էր **95-ից 98-րդ տեղերը**: Նկատի ունենալով Հայաստանի ԿԸՀ-ի համար հաշվարկված վիճակագրական սխալի չափը (4.01), կարելի է պնդել, որ 2015թ. համեմատությամբ Հայաստանի հանրային ոլորտի կոռուպցիայի ընկալումը 2016թ. մնացել է մոտավորապես նույնը: Մինևույն ժամանակ, ԿԸՀ դասակարգման արդյունակում Հայաստանը նահանջել է 18 տեղով, իսկ եթե դասակարգման 2015 և 2016 թվականների արդյունակներից հանենք բոլոր այն երկրները (թվով 10 երկիր), որոնք ընդգրկված են եղել կամ միայն 2015թ. (1 երկիր) կամ էլ միայն 2016թ. դասակարգման արդյունակներում (9 երկիր), ապա նահանջը կկազմի մոտ 10 տեղ:¹ Սակայն առավել մտահոգիչ է այն միտումը, որն առկա է վերջին երեք տարիներին (2014-2016թթ.) և որը երևում է ստորև բերված ինֆոգրաֆիկայից: Այս միտումը կարիք ունի ավելի հանգամանալից քննարկման:



¹ Ավելի մանրամասն 2015 և 2016 թվականների դասակարգման արդյունակներում չընդգրկված երկրների մասին տե՛ս *Հաճախակի տրվող հարցեր* կյուբում: Հարկ է նշել, որ բոլոր այդ 10 երկրների (1 երկիր, որն ընդգրկված էր միայն 2015թ. դասակարգման արդյունակում և 9 երկիր, որոնք ընդգրկված են միայն 2016թ. արդյունակում) ԿԸՀ արժեքները գերազանցում են Հայաստանի 2015 և 2016 թվականների ԿԸՀ արժեքներին:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ Հայաստանը ներառված է Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիա տարածաշրջանի մեջ (տես 2016թ. ԿԸՀ համապատասխան տարածաշրջանի աղյուսակը): Այդ տարածաշրջանի մեջ ներառված են Եվրամիության անդամ չհանդիսացող բալկանյան երկրները (Չերնոգորիա, Սերբիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ալբանիա, Մակեդոնիա և Կոսովո), նախկին խորհրդային հանրապետությունները՝ բացի ԵՄ անդամ բայթյան հանրապետություններից և Թուրքիան: Տարածաշրջանի 19 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 10-րդ տեղը (2015թ. նա զբաղեցնում էր 8-րդ տեղը): 2016թ. այս տարածաշրջանի երկրներից Կոսովոն և Բելառուսը առաջ անցան Հայաստանից: Արդյունքում, նախորդ տարվա համեմատ, Հայաստանը նախկին խորհրդային հանրապետություններից այժմ զիջում է ոչ միայն բայթյան հանրապետություններին² և Վրաստանին, որի ԿԸՀ 2016թ. համաթիվը հավասար է 57-ի (2015թ. 52-ի փոխարեն կա աճ 5 միավորով), որն ամենաբարձրն է Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիա տարածաշրջանում, այլև այժմ նաև Բելառուսին, որի ԿԸՀ-ն 2016թ. ունեցավ շատ տպավորիչ բարելավում (2015-ի 32-ից մինչև 40 2016-ին՝ կամ 8 միավոր)՝ ԿԸՀ արժեքի իր աճով ամբողջ աշխարհում զիջելով միայն Սուրինամին, որի ԿԸՀ-ն աճել է 9 միավորով:

Իր հարևաններից Հայաստանը, ինչպես և նախորդ տարիներին շարունակում է զիջել նաև Թուրքիային (41՝ 2015-ի 42-ի փոխարեն), որը շարունակում է գրանցել էական նահանջ սկսած 2012-ից, երբ նրա ԿԸՀ արժեքը հավասար էր 49 միավորի: Հայաստանի մյուս երկու հարևանների՝ Ադրբեջանի և Իրանի, 2016թ. ԿԸՀ համաթիվերը 2015թ. համեմատ բարելավել են համապատասխանաբար 1 և 2 միավորով, հավասարվելով 30-ի՝ Ադրբեջանի դեպքում (123-ից 130-րդ տեղեր) և 29-ի՝ Իրանի դեպքում (131-ից 135-րդ տեղեր)՝ առայժմ զիջելով Հայաստանին: ԵԱՏՄ անդամ մյուս երկրների, բացի Բելառուսից, ԿԸՀ արժեքները շարունակում են ավելի ցածր մնալ Հայաստանի ԿԸՀ-ից: Հայաստանին շարունակում են զիջել նաև Եվրասիական միության անդամ մյուս երկրները: Մասնավորապես Ռուսաստանի ԿԸՀ-ն մնացել է 29 միավոր (131-ից 135-րդ տեղեր): Չի փոխվել նաև Ղրղզստանի ԿԸՀ արժեքը (28 միավոր՝ 136-ից 141-րդ տեղեր), իսկ Ղազախստանի ԿԸՀ արժեքը ավելացել է 1 միավորով՝ դառնալով հավասար 29-ի (131-ից 135-րդ տեղեր):

² Բայթյան հանրապետություններից լավագույն արդյունքը 2016-ին, ինչպես և բոլոր նախորդ տարիներին Էստոնիային է՝ 70 միավոր, որին հաջորդում են Լիտվան 59 միավորով և Լատվիան՝ 57 միավորով: Իմիջիայրց, Էստոնիայի ԿԸՀ-ն շարունակում է մնալ լավագույնը նախկին բոլոր կոմունիստական երկրների շարքում և այն 22-րդն է աշխարհում: